Մեք թագաւոր չունիմք օծած,
Ոչ իշխանութիւն մեզ տրուած,
Յամէն ազգաց եմք մեք կոխած,
Քրիստոնէից եւ յայլազգեաց։
Զունիմք աթոռ ըստ օրինաց,
Ոչ առաջնորդք ի վրայ խելաց.
Ամէնք խըմած են ու հարբած,
Մամոնայի ծառայ եղած։
Զինչ որ կ'ասեն՝ ինքեանք չառնեն,
Եւ վասըն դրամի քարոզեն.
Յամէն քաղաք ժողովք կ'առնեն,
Ով որ քիչ տայ՝ կու բանադրեն։
Կ'ուտեն խըմեն, կ'ուրախանան,
Վասն օրինաց բնաւ չըհոգան.
Զոչխարս ձըգեն գայլոց բերան,
Փրկել զոգիս բնաւ չիկանան։
Վայ և եղուկ հազար բերան.
Զի Հայք հոգով մարմնով կորան.
Ո՛ւր են նախնի հայրապետքն այն
Եւ քաջ հովիւքըն սըրբազան.
Որք վասն հօտին զանձինս եդին,
Զգայլս և զգազանսըն փախու-
[ցին.
Ըստ բանի Տեառն Յիսուսի Փըրկ-
[չին,
Արքայութեան ժառանգ արին։
Այժմըս հովիւք՝ վարձկան եղեն,
Տեսեալ զգազանս՝ ի յետ փախչեն.
Գազանք զգառինս յափշտակեն
Եւ պատառեալ զնոսա ցրուեն։
Որպէս այժմուս հազար թըւին
Եօթանասուն հինգերորդին,
Եկն Մելքիսեթ քաղաք Լովին.
Կորոյս ըզմեզ զամենեսին.
Բազում վընաս յիւրմէն տեսաք,
Շատ և յոլով տուգանք տրուաք.
Անթիւ արծաթ ոսկի տարաք,
Թէ նովաւ զհոգիս փրկէաք.

Իսկ նա բընաւ ամենեւին
Զառնէր փոյթ փրկել զմեր հոգին.
Կոչէր առ ինքն զամենեսին,
Թէ ձեռնադրեմ զձեզ՝ զի՞նչ տայք
[ինձ։
Վանքերն այլ աբեղայ չիմնաց.
Ամենքն եկին իւրեանց յետուանց,
Ղուռուչ դեկան բերին հիտրաց [1],
Լինել Պարոնտէր [2] թարց թեմաց։
Դըպիր մ'այլ կայր ի յայս տեղաց,
Նիկոլ անուն Թորոսովեաց.
Որ ի Ստամպօլ ելեալ գընաց,
Մընաւ ի կարգըն աբեղաց.
Լըւաւ զհամբաւ երկրին Լեհաց,
Թէ Մելքիսեթն չատ ձեռնա-
[դրեաց.
Փութանակի Լով ժամանեաց,
Մելքիսեթին աչակերտեաց։
Իբրեւ ամիսք քանի մ'անցին,
Մելքիսեթն ասաց Նիկոլին.
« Քանի՞ հարիւր մառչիլ տաս ինձ՝
Զքեզ առաջնորդ դնեմ Լովին »։
Ասաց. « Երթամ յազգականքն իմ,
Քերց և եղբարց ասեմ վասն իմ »։
Նոքա լըւան և խընդացին,
Զսէքէրն առ նա յուղարկեցին.
Զոր յետ բազում երթեւեկին՝
Հարիւր յիսուն ղուռուչ կտրեցին.
Հետ մէկմէկի թուղթ գիր արին,
Որ յետ շաբթու մի օրհնէին։
Իսկ ժողովուրդն երբ լըսեցին,
Քահանայք՝ զամբոխս կուտեցին,
Օրհնելուն ժամն վանքն գնացին.
« Այս ի՞նչ բաներ կ'անես, ասին.
Մեք զնա չուզեմք, ոչ կ'ընդունեմք
Ոչ յեկեղեցիս մընանեմք.
Զընի թէ զնա օրհնես մեզի.
Թէ չէ նա՝ չատ աղմուկ լինի »։

1. Հետ իրերաց. իրենց հետ։ — 2. Եպիսկոպոս ըլլալ առանց թեմ ունենալու։